



«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի ԹԻՎ 8

ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 55-րդ կետը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԲՀ) գիտական խորհուրդը.

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ԵՊԲՀ հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Գ.Ավետիսյանի կողմից ներկայացված 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքները գնահատել բավարար (հաշվետվությունը կցվում է) (23-05-08-01).
2. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լ.Ավետիսյանին և հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Գ.Ավետիսյանին՝ հիմք ընդունելով հոգաբարձուների խորհրդի համապատասխան որոշումները՝ ապահովել համանման գործառույթների իրականացնող ամբիոնների օպտիմալացմանն ուղղված աշխատանքները (23-05-08-02).
3. Հանձնարարել Կարիերայի կենտրոնի ղեկավար Խ.Մարգարյանին՝ շարունակել «ԳԼՕԲ-ՈՒՍ» ծրագրի շրջանակում կիրառվող ձեռնարկների հայալեզու մշակումները և տեսադասախոսությունների նկարահանումների գործընթացը (23-05-08-03).
4. Հաշվի առնելով Նոմինացիոն կոմիտեի առաջարկը՝ սահմանել Գուրգեն Բաղդասարյանի անվան կրթաթոշակ՝ կլինիկական օրդինատուրայում՝ «Արտաբուժություն» մասնագիտությամբ (կցվում է) (23-05-08-04).



5. Հաստատել հետրուիական և շարունակական կրթության կատարելագործման դասընթացների ծրագրերը (կցվում է) (23-05-08-05).
6. Հաստատել «Բուժական գործ» կրթական ծրագրերի մոդուլային ձևաչափերը (կցվում է) (23-05-08-06).
7. Հաստատել ԵՊԲՀ Օտարերկրյա ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի կանոնակարգը (կցվում է) (23-05-08-07).
8. Հաստատել ԵՊԲՀ Միջազգային համագործակցության բաժնի կանոնակարգը (կցվում է) (23-05-08-08).
9. Հաստատել ԵՊԲՀ Հանրային առողջության ֆակուլտետի կանոնակարգի փոփոխությունները (կցվում է) (23-05-08-09).
10. Հաստատել ԵՊԲՀ «Հանրային առողջության ֆակուլտետի մագիստրոսական թեզերի պաշտպանության մասին» կանոնակարգի փոփոխությունները (կցվում է) (23-05-08-10).
11. Հաստատել ԵՊԲՀ վարչական, կլինիկական, ակադեմիական և գիտական անձնակազմի պարտավորությունների բախման կանխարգելման քաղաքականությունը (կցվում է) (23-05-08-11).
12. Հաստատել ԵՊԲՀ ուսանողների համար ուսուցանվող «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի պլան-ծրագիրը (կցվում է) (23-05-08-12).
13. Հաստատել ԵՊԲՀ քոլեջի ուսանողների համար ուսուցանվող «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի պլան-ծրագիրը (կցվում է) (23-05-08-13).
14. Հաստատել ԵՊԲՀ «Բուժական գործ» կրթական ծրագրի ուսումնառության արդյունքների գնահատման մեխանիզմների քաղաքականությունը (կցվում է) (23-05-08-14).
15. Երաշխավորել տպագրության ներկայացված ուսումնական գրականությունը (կցվում է) (23-05-08-15).
16. Սույն որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝




Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ
Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ